



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ  
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

N 11-1/754-12

31. 01. 2012 թ.

Ա/Ձ Արա Շահբազյանի ներկայացուցիչ

Օ.Ստեփանյանին

հասցե՝ ք.Երևան, Խորենացի փող.,

տուն 231/19

պատճենը՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ Արաբկիրի ՀՏ պետ

պարոն Ա.Սարգսյանին

Կից ուղարկվում է Ձեր 15.12.2011թ-ի գանգատի վերաբերյալ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 17.01.2012թ. թիվ 2/5 որոշումը:

Առդիր՝ 4 թերթ:

Հարկային մարմնի գանգատարկման  
հանձնաժողովի նախագահ՝

Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ

« Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 2/5

17 հունվարի 2012թ.

Քննարկվեց Ա/Ձ Արա Շահբազյանի 15.12.2011թ-ի գանգատը « ԿԱ ՊԵԿ Արաբկիրի ՀՏ պաշտոնատար անձանց գործողությունների (անգործության) դեմ:

Ա/Ձ Արա Շահբազյանի գանգատում մասնավորապես նշված է.

Ա/Ձ Արա Շահբազյանը տնտեսական գործունեության նպատակով «Երևանի թիվ 2 շուկա» ՍՊԸ տարածքից 01.02.2004թ. վարձակալել է 4.4 ք.մ. տարածք (պայմանագիր թիվ 40 01.02.2004թ.): Վարձակալության պայմանագիրը լուծվել է 31.07.2004թ. կրպակաշարի ապամոնտաժման կապակցությամբ:

12.07.2004թ. Ա/Ձ Արա Շահբազյանը դիմում է ներկայացրել Արաբկիրի ՀՏ լուծարային ստուգում կատարելու և լուծարային տեղեկանք տրամադրելու վերաբերյալ պետական ռեգիստրի Արաբկիրի տ/ք ներկայացնելու համար, սակայն մինչ օրս այդ գործողությունները չեն իրականացվել: Այդ կապակցությամբ 29.07.2011թ. Արա Շահբազյանը դիմել է « ԿԱ ՊԵԿ, խնդրելով տրամադրել 12.07.2004թ. իր կողմից Արաբկիրի ՀՏ ներկայացրած լուծարային ստուգում կատարելու և Ա/Ձ-ն լուծարելու դիմումների պատճենները: Ի պատասխան այդ դիմումի, 03.08.2011թ. ստացվել է թիվ 2715 գրությունը հետևյալ բովանդակությամբ. «Ի պատասխան Ձեր դիմումի տեղեկացնում ենք, որ 12.07.2004թ. Արաբկիրի ՀՏ դիմում եք ներկայացրել լուծարային ստուգում կատարելու, որից հետո 21.07.2006թ. բացվել է լուծարային ստուգման հանձնարարագիր (հանձնարարագիր թիվ 1012507), սակայն 28.07.2006թ-ին Ձեր կողմից հայտարարություն է ներկայացվել, որ բուժման նպատակով գտնվում եմ քաղաքից դուրս և խնդրում եմ ստուգման գործընթացը վերսկսել քաղաք վերադառնալուց հետո»: Մինչդեռ Արա Շահբազյանը խնդրել է տրամադրել իր դիմումների (թվով երկու հատ) պատճենները: Այդ իսկ պատճառով 17.08.2011թ. « ԿԱ ՊԵԿ ներկայացվել են դիմումներ Ա/Ձ Արա Շահբազյանի կողմից 12.07.2004թ. ՀՏ ներկայացված դիմումների պատճենները և լուծարային տեղեկանք տրամադրելու, ինչպես նաև փոխադարձ հաշվարկների տեղեկանք ստանալու խնդրանքով:

12.10.11թ-ին ստացել ենք թիվ 3429 գրություն, որտեղ մասնավորապես նշված է. «Ի պատասխան Ձեր կողմից ներկայացված 20.07.2011թ.-ի և 17.08.2011թ.-ի գրությունների՝ հայտնում ենք Ձեզ, որ անհատ ձեռներեցի կողմից ներկայացվել է 29.06.2004թ-ի հայտարարություն 30 քմ մակերեսից ոչ ավելի առևտրական տարածք ունեցող խանութների, կրպակների ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ: 12.07.2004թ-ն Ձեր կողմից ներկայացվել է դիմում լուծարային ստուգում կատարելու վերաբերյալ: Համաձայն «Հաստատագրված վճարների մասին» « օրենքի 12-րդ հոդվածի մինչև 2009թ-ի փետրվարի մեկը գործող խմբագրությամբ՝ հարկային տեսչության նոր հայտարարություն չներկայացնելու դեպքում յուրաքանչյուր ամսվա համար հաստատագրված վճարի չափը հաշվարկվում է հարկային տեսչության մարմնի կողմից՝ նախորդ ամսվա հաստատագրված վճարի հաշվարկման համար հիմք ընդունած ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների կիրառմամբ: «Հաստատագրված վճարների մասին» « օրենքով... հաստատագրված վճարի հաշվարկի կասեցում կամ չհաշվարկում նախատեսվում է միայն կասեցման կամ չհաշվարկման հիմքերի վերաբերյալ համապատասխան հարկային տեսչության մարմին նախապես գրավոր դիմում ներկայացնելու դեպքում (օրենքի 10-րդ և 98-րդ հոդվածներ), որը Ձեր կողմից չի ներկայացվել»:

Կից ներկայացվել է փոխադարձ հաշվարկների տեղեկանք, որտեղ սակայն կոնկրետ չի նշվել թե երբևեց են առաջացել Ա/Ձ Արա Շահբազյանի հարկային պարտավորությունները: Ըստ այդ տեղեկանքի 12.10.2011թ-ի դրությամբ, Ա/Ձ Արա Շահբազյանի ապառքը հաստատագրված վճարի մասով կազմում է 385.268 դրամ, իսկ տույժը՝ 214.198 դրամ, Եկամտահարկի մասով տույժը կազմում է 731 դրամ, իսկ սոց. ապահովության վճարների մասով ապառքը կազմում է 426.000 դրամ, իսկ տույժը՝ 226.094 դրամ:

Գտնում ենք, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից լուծարային տեղեկանք չտրամադրելը հանդիսանում է ոչ իրավաչափ գործողություն, որի արդյունքում խախտվել են Արա Շահբազյանի իրավունքները:

Ա/ձ Արա Շահբազյանի լուծարման գործընթացը սկսվել է դեռևս 2004 թվականին: Այդ ժամանակահատվածում գործել են օրենսդրական հետևյալ դրույթները.

Այսպես, <Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին> ՀՀ օրենքի 08.06.2004թ. համապատասխան ինկորպորացիայի 14 հոդվածի 5 մասի համաձայն, անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարման դեպքում անհատ ձեռնարկատերը պետական ռեգիստրի համապատասխան տարածքային ստորաբաժանում է ներկայացնում դիմում և սույն օրենքի 24-րդ հոդվածով սահմանված փաստաթղթերը, ինչի վերաբերյալ փաստաթղթերի ընդունման մատյանում կատարվում է գրառում: Պետական ռեգիստրի համապատասխան տարածքային ստորաբաժանումում ստուգվում է ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունն օրենքի պահանջներին:

Եթե գրանցման հայտի հետ չի ներկայացվել սույն օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ կետի <բ> ենթակետով սահմանված տեղեկանքը (տեղեկանքները), ապա պետական ռեգիստրի տարածքային ստորաբաժանումը եռօրյա ժամկետում հարցում է ուղարկում հարկային և սոցիալական ապահովության մարմինների համապատասխան տարածքային ստորաբաժանումներին՝ վերջիններիս նկատմամբ անհատ ձեռնարկատիրոջ պարտավորությունների բացակայությունը հավաստելու վերաբերյալ: Հարցումն ուղարկվում է պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ, կամ հանձնվում է ստացականով: Հարկային և սոցիալական ապահովության մարմինները պատասխանում են հարցմանն այն ուղարկելու օրվանից 30 օրվա ընթացքում: Սույն կետով նախատեսված հարցմանը հարկային և սոցիալական ապահովության մարմինների կողմից սահմանված ժամկետում չպատասխանելը դիտվում է որպես վերջիններիս նկատմամբ դադարող անհատ ձեռնարկատիրոջ պարտավորությունների բացակայության հավաստում:

Համաձայն <Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին> ՀՀ օրենքի նույն ժամանակշրջանի ինկորպորացիայի 24-րդ հոդվածի 2-րդ մասի (այդ ժամանակվածում գործող) անհատ ձեռնարկատերն իր գործունեության դադարման դեպքում պետական ռեգիստրի համապատասխան տարածքային ստորաբաժանում պետք է ներակայացնե՞ր տեղեկանք հարկային և սոցիալական ապահովության մարմիններից՝ պարտավորությունների բացակայության մասին, իսկ այդպիսի տեղեկանք չներկայացնելու դեպքում պետական ռեգիստրի համապատասխան տարածքային ստորաբաժանումն ինքը պետք է կատարե՞ր համապատասխան հարցում հարկային և սոցիալական ապահովության մարմինների համապատասխան տարածքային ստորաբաժանումներին, որոնք էլ պարտավոր էին պատասխանել 30 օրվա ընթացքում: Այդ սահմանված ժամկետում չպատասխանելը դիտվում էր որպես անհատ ձեռնարկատիրոջ պարտավորությունների բացակայության հավաստում: Սակայն Ա/ձ Արա Շահբազյանը ինքն է դիմել 12.07.2004թ-ին Արաբկիրի ՀՏ, խնդրելով կատարել լուծարային ստուգում և տալ համաաատասխան տեղեկանք ՀՀ պետ. ռեգիստր ներկայացնելու համար: Հարկային տեսչությունը նույնպես պարտավոր էր պատասխանել 30 օրվա ընթացքում և տրամադրել համաաատասխան տեղեկանք: Սակայն ըստ 03.08.11թ. Արաբկիրի ՀՏ թիվ 2715 գրության միայն 21.07.2006թ. բացվել է լուծարային ստուգման հանձնարարագիր, ինչը նշանակում է, որ Վարչական մարմնի կողմից խախտվել է <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 46 հոդվածի դրույթները, որը հանգեցնում է նույն օրենքի 48 հոդվածի կիրառման, այն է սահմանված ժամկետում Վարչական մարմնի կողմից լուծարային ստուգում չսկսելը և լուծարային տեղեկանք չտրամադրելը դիտվում է որպես վերջիններիս նկատմամբ դադարող անհատ ձեռնարկատիրոջ պարտավորությունների բացակայության հավաստում: Օրենքի այդ կոպիտ խախտման արդյունքում Ա/Ձ Արա Շահբազյանի մոտ տարիներ շարունակ հաշվարկվել են հարկային պարտավորություններ, և նույնիսկ նա 15.04.2009թ-ին ենթարկվել է վարչական տույժի: Մինչդեռ նա 2004թ-ից դադարել էր իր գործունեությունը:

Անձի դիմումից հստակ է անձի մտադրությունը, և բոլոր փաստերն են վկայում նրա գործունեության դադարեցման հանգամանքը:

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 9 հոդվածի Վարչական մարմիններն իրավունք չունեն անձանցից պահանջել կատարելու այնպիսի գործողություններ, որոնք արդեն իսկ կատարվել են այդ անձանց կողմից այլ գործողությունների շրջանակներում կամ էլ իրենց բովանդակությամբ ներառվում են կամ կարող են ներառվել այդ շրջանակներում:

Եթե անձանց կողմից վարչական մարմիններ ներկայացված փաստաթղթերը (տվյալները, տեղեկությունները) իրենց մեջ բովանդակային առումով ներառում են անհրաժեշտ այլ փաստաթղթերի բովանդակություն, ապա վերջիններս այլևս չեն կարող պահանջվել լրացուցիչ կամ առանձնացված ձևով:

«Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի դրույթների վերլուծությունից ակնհայտ է, որ անձը վճարում է հաստատագրված վճար «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքով սահմանված ձեռնարկատիրական գործունեության տեսակների իրականացման դեպքում: Տվյալ դեպքում Ա/Ձ Արա Շահբազյանը, սկսած 2004թ. հուլիս ամսից չի իրականացրել ձեռնարկատիրական գործունեություն, այն է՝ կրպակի առևտրային գործունեություն, համապատասխանաբար ներկայացրել է լուծարային ստուգում նշանակելու և լուծարային տեղեկանք տրամադրելու դիմում, որը մինչ օրս մնացել է անպատասխան:

Վերոգրյալից հետևում է, որ Ա/Ձ Արա Շահբազյանը 2004թ-ից չի իրականացրել ձեռնարկատիրական գործունեություն, ձեռք է առել բոլոր միջոցներն իր գործունեությունը դադարեցնելու ուղղությամբ, սակայն վարչական մարմնի անգործության հետևանքով նրա համար առաջացել են լրացուցիչ պարտավորություններ:

Ա/Ձ Արա Շահբազյանը խնդրում է ճանաչել վարչական մարմնի անգործությունը ոչ իրավաչափ և որպես հետևանք հաստատել վերջինիս հարկային պարտավորությունների բացակայությունը ու լուծարային տեղեկանքը համարել տրամադրված:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), լսելով Արաբկիրի ՀՏ և Ա/Ձ Արա Շահբազյանի ներկայացուցիչների ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերը և ապացույցները եկավ եզրակացության, որ գանգատը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ:

«Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի (08.06.2004թ.) 14 հոդվածի 5 մասի համաձայն, անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարման դեպքում անհատ ձեռնարկատերը պետական ռեգիստրի համապատասխան տարածքային ստորաբաժանում պետք է ներկայացնել դիմում, ինչպես նաև նույն օրենքի 24-րդ հոդվածով սահմանված փաստաթղթերը:

«Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ կետի «բ» ենթակետի համաձայն, անհատ ձեռնարկատերը պետական ռեգիստրի համապատասխան տարածքային ստորաբաժանում դիմումի հետ միասին պետք է ներկայացնել տեղեկանքներ հարկային և սոցիալական ապահովության մարմիններից՝ պատասխանատվությունների բացակայության մասին:

Քննարկվող դեպքում Ա/Ձ Արա Շահբազյանը, ղեկավարվելով «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի (08.06.2004թ.) 14 հոդվածի 5 մասի և 24-րդ հոդվածի 2-րդ կետի «բ» ենթակետի պահանջներով, 12.07.2004թ-ին դիմում է ներկայացրել Արաբկիրի ՀՏ լուծարային ստուգում իրականացնելու և համապատասխան տեղեկանք տրամադրելու վերաբերյալ՝ պետական ռեգիստրի Արաբկիրի տարածքային բաժին ներկայացնելու համար: Նշված դիմումը մուտք է եղել Արաբկիրի ՀՏ 12.07.2004թ-ին:

Լուծարային ստուգում իրականացնելու և համապատասխան տեղեկանք տրամադրելու վերաբերյալ դիմում է ներկայացվել նաև ՍԱՊՀ տարածքային կենտրոն: Արդյունքում, ՀՀ ՍԱՊՀ նախագահի 09.08.2004թ-ի թիվ 23994 հանձնարարագրի համաձայն 15.10.2004թ-ին կազմվել է լուծարային ակտ:

Ինչ վերաբերում է Արաբկիրի ՀՏ-ին, ապա վերջինիս կողմից ցուցաբերվել է անգործություն և Ա/Ձ Արա Շահբազյանի 12.07.2004թ-ի դիմումին սահմանված ժամկետում ընթացք չի տրվել: Դրա մասին է վկայում այն փաստը, որ ՀՀ ԿԱ ՀՊԾ պետի բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության լուծարային ստուգում կատարելու վերաբերյալ թիվ

1012507 հանձնարարագիրը հրապարակվել է միայն դիմումը ներկայացվելու օրվանից երկու տարի հետո՝ 21.07.2006թ-ին: Ընդ որում, Ա/Ձ Արա Շահբազյանի կողմից դիմումը ներկայացվելու օրվանից մինչև թիվ 1012507 հանձնարարագրի հրապարակումն ընկած ժամանակահատվածում դիմումին որևէ պատասխան չի տրվել:

Քննարկման ընթացքում նշվեց նաև, որ 17.08.2006թ-ին Կենտրոն թաղային համայնքի ղեկավարի տեղակալի կողմից Արաբկիրի ՀՏ ներկայացվել է տեղեկանք Ա/Ձ Արա Շահբազյանին պատկանող կրպակը, որը գտնվում էր Մ.Խորենացու փողոցում գտնվող թիվ 2 շուկայի կրպակաշարում, 2004թ. հունվար ամսին ապամոնտաժվելու մասին:

Նշվեց նաև, որ <Երևանի թիվ 2 շուկա> ՍՊԸ տնօրենի 22.12.2005թ-ի թիվ 31 տեղեկանքի համաձայն, Ա/Ձ Արա Շահբազյանի կողմից <Երևանի թիվ 2 շուկա> ՍՊԸ տարածքից 01.02.2004թ-ին վարձակալված 4.4մ<sup>2</sup> տարածքի վարձակալության պայմանագիրը լուծվել է 31.07.2004թ-ին կրպակաշարի ապամոնտաժման կապակցությամբ և նրան այլ տարածք չի հատկացվել:

Հարկ է նշել նաև, որ Ա/Ձ Արա Շահբազյանի կողմից 20.07.2011թ-ի և 17.08.2011թ-ի գրություններին Արաբկիրի ՀՏ կողմից պատասխանվել է միայն 12.10.2011թ-ի թիվ 3429 գրությամբ:


Ելնելով վերոգրյալից Հանձնաժողովը գտնում է, որ քննարկվող դեպքում խախտվել են <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի պահանջները, որն ըստ էության, հանգեցրել է նույն օրենքի 48-րդ հոդվածով նախատեսված պահանջների կիրառմանը:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

#### ո թ ո շ ու մ է՝

Ա/Ձ Արա Շահբազյանի 15.12.2011թ-ի գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Արաբկիրի ՀՏ պաշտոնատար անձանց գործողությունների (անգործության) դեմ բավարարել:

Հանձնաժողովի նախագահի



Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ